

Եաթաղանին, բըրոցին, եղեռնաւոր բոցին տակ,
 Ինչ որ հանճարն էր կանգնել, զայն մոխրակոյտը կըլլեց:
 Արդ տաճարները ո՞ր էն՝ որոնց բուրեան գըմբէթին
 Ներքեւ ծիծառն հազիւ հազ գարնան աղօթքն էր ըրեր.
 Ո՞ր վարժոցներն ու պալատն ապագայի լոյսերուն.
 Մանուկներու ողջակեզ սըրտեր հոն խունկ կը մըխան:
 Ո՞ր բաղնիքները յըստակ, ջինջ մարմարներն որոնց մէջ
 Յուլացին կոյս աղջիկներն իրենց լոգցած ժամերուն.
 Ո՞ր շիրիմներն հոյակապ, ո՞ր կոթողներն հինաւուրց
 Որոնց վըրայ Յեթումներն յաղթանակներ գըրեցին...
 Մա՛հ եւ մոխի՛ր. Թըխայրեաց պատեր միայն աւասիկ
 Իրիկուան մէջ կը ցըցուին բուխներ կանչելով:
 Օտարակա՛ն, հիմակ այս Երկրին անցեալն արթընցուր
 Յուշերուդ մէջ, եւ ուրիշ Յեղի մը դարն ափսոսայ,
 Խորիէ թէօր մ՛ըստորոտը Տաւրոսի բնակեցաւ
 Ժիր ժողովուրդ մ՛որ կեանքին աստուածացումը երգեց:
 Իր կարաւա՛նը անցաւ, եւ տարաւ միշտ հեղեղել
 Բարի ցորեանն ամէն հիւղ՝ ուր ճըրագ մ՛հեզ կը պլալար.
 Իր կարաւա՛նը անցաւ, եւ Տարսնի գոհարներն
 Աստղերու պէս թափեցան բամբիշներուն գոգին մէջ.
 Եւ այն ճամբան լեռնդմէջ՝ ուրկէ Գանգես արշաւեց
 Երիտասարդ Մակեդոնն իր շաւղին վրայ կանգնելով
 Բագիններ՝ ուր պաշտուեցաւ գեղեցիկ Միտքը Յելլէն
 Աթենասի արձանին լուսակառոյց ձեւին տակ,
 Այդ ջինջ ճամբան Ռուբինեան գաւակներուն շինարար
 Տեսաւ սայլերը ճռընչող Արեւելքէն Արեւմուտք,
 Որոնց վըրայ բեռցուցած էր Յայ վաստակն աննըւած
 Մարմարն յուռթի լեռներուն, այգիներուն յորդ գինին.
 Ո՛վ նախասնունդը երգող եւ քանդակող ազգերուն:
 Անցա՛ւ հիմա բոլոր այդ գեղեցկութիւնը կեանքին.
 Կըրակի Յեղը, աւա՛ղ, ժամանակէն աւելի՛